

Ջարգելի գործընկեր

Մարքեթինգի Հայկական Ասոցիացիան 2019 թ.-ի օգոստոսի 21-ին Էկոնոմիկայի նախարարության հետ կնքել է «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների կազմակերպման» մասին պայմանագիր, որն ուղղված է արտահանման խթանմանը և գործարարներին աջակցության ցուցաբերմանը՝ իրենց արտադրանքը արտերկրում ներկայացնելու և արտահանման հնարավորությունն ստեղծելու կամ ընդլայնելու նպատակով:

Էկոնոմիկայի նախարարությունը նախանշել է մինչև 20 կազմակերպությունների մասնակցության աջակցումը 2020 թ.-ի փետրվարի 24-27 ընկած ժամանակահատվածում Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում կայանալիք խոշորագույն «CPM-COLLECTION PREMIERE MOSCOW» ցուցահանդեսին: Նախատեսվում է, որ ՀՀ-ը տվյալ ցուցահանդեսին ներկայանալու է միասնական տաղավարով, որտեղ կազմակերպությունները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց ապրանքները:

Սույն նամակով հրավիրում ենք բոլոր շահագրգիռ ընկերություններին, որոնք արտադրում են կանանց, տղամարդկանց և մանկական հագուստ, ինչպես նաև աքսեսուարներ, ներքնազգեստ և լողազգեստ, և ցանկություն ունեն մասնակցելու «CPM-COLLECTION PREMIERE MOSCOW» ցուցահանդեսին, լրացնել ու Ասոցիացիային ներկայացնել մասնակցության հայտ:

Նախնական դիմումների հավաքագրման փուլի ավարտին, Մարքեթինգի Հայկական Ասոցիացիան կհրավիրի բոլոր հետաքրքրված կազմակերպություններին ավելի մանրամասն քննարկելու աջակցության ձևաչափը, ինչպես նաև այլ տեխնիկական հարցեր:

Հետաքրքրված կազմակերպություններին խնդրում ենք լրացնել սույն նամակին կից ներկայացվող կարճ հարցաշարը, և մինչև դեկտեմբերի 10-ը ուղարկել այն info@armenianmarketing.com էլ. հասցեով և զանգահարել 055 076607 հեռախոսահամարին՝ ստացումը հաստատելու նպատակով:

Ցանկացած այլ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 010 540719 համարով:

Ջարգանքով՝

Արամ Նավասարդյան, նախագահ
Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա

